



ՀԱՅ ԿԳԵՐԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎՐ



Ուրբաթ, 1 դեկտեմբեր 2017-ին, Ֆրանսիայի Թեմի տարբեր ծովերը ներկայացնող հայ հոգևորականներու 22 անդամներ, իրենց ամենամեայ հաւաքին համար հաւաքուեցան Գրենոպլի եկեղեցին: Մինչեւ ժողովի նիստերու պաշտօնական մեկնարկը, հոգևորականները, Առաջնորդ, Գերաշնորհ Ս. Վահան Եպիսկոպոս Յովհաննէսեանի նախագահութեամբ, Օլսական եկեղեցիին մէջ հաւաքուեցան. մեզմէ բաժնուած քահանայներու եւ սարկաւազներու հոգիներուն, հոգեհանգստի պաշտօն կատարելու համար: Ժողովը նշանակեց իր գործադիր յանձնախումբը եւ աւելի վերջ հանդիպումը տեղի ունեցաւ առաջուրնէ որոշուած օրակարգի համաձայն: Քննարկուած հարցերը կ'ընդգրկէին թեմ-ծովի յարաբերութիւնները, Ֆրանսայի Թեմի երիտասարդութիւնը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ հռչակուած երիտասարդութեան Տարին (2018), լոյս տեսնելիք հրատարակութիւնները, ներառեալ երիտասարդներու համար ֆրանսերէն եւ հայերէն հրատարակուելիք Հայ եկեղեցոյ Կրօնագիտութիւնը, եկեղեցին ժողովուրդին մօտեցնելու եւ անոր հետ յարաբերութեան մէջ մտնելու ծրագրեր, Թեմի կանոնադիրը, եկեղեցոյ ամառնային ճամբարը եւ ծխական առաքելութեան մասին հոգևորականների բարձրացրած հարցերը: Շատ պաղ օր մը, հոգևորականները նախաձաճ, ճաշ եւ ընթրիքով Գրենոպլի Ծովի ջերմ հիւրասիրութիւնը վայելեցին: Շնորհակալութիւն Արժամապատիւ Ս. Բարբէն Քնյ. Ստեփանեանին, ատենապետ Պրն. Արմանտ Թորոսեանին, եւ գանձապահ Պրն. Անտրէ Տեփոյեանին:

ՇԱՐՎԻԷՕԻ ՄԷՋ ԱՌԱՋԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԿՐ



Կիրակի, դեկտեմբերի 3-ին, Առաջնորդ, Գերաշնորհ Ս. Վահան Եպիսկոպոս Յովհաննէսեան այցելեց Շարվիե-Շավանիտի հայ համայնքը եւ պատարագեց "24 Ապրիլ 1915 - Հայոց Ցեղասպանութիւն" հրապարակի Սուրբ Նշան Հայ Առաքելական եկեղեցոյ մէջ: Այցին նպատակն էր տօնել եկեղեցիի օծման 35-ամյակը եւ պաշտօնապէս տեղադրել Հայր Դաւիթ Մարգարեանը՝ որպէս ծովի նոր քահանայ: Հայր Դաւիթն ալ մասնակցեցաւ Պատարագին եւ եպիսկոպոսին աջակցեցաւ: Հաւատացեալներով լեփ-լեցուն եկեղեցոյ տեսքը, ուր նոյնիսկ ոտքի կենալու տեղ չէր մնացած, եւ Սուրբ Հաղորդութիւն առնողներու երկար շարքը տպաւորիչ էր: Նոյնքան տպաւորիչ էր Վիենի եւ նորաստեղծ Ռոմանի ծխական խորհուրդներու անդամներուն ներկայութիւնը: Կրօնական արարողութիւնէն վերջ, Առաջնորդին այցելութիւնը եւ եկեղեցոյ 35-ամեակը տօնելու համար հաւատացեալներուն կէտորայ ճաշ հրամցուեցաւ: Իր ելոյթին մէջ Օլսական Խորհրդի նախագահը Յակոբ Շիրվանեան բարի գալուստ մաղթեց Գերաշնորհ Առաջնորդին եւ ըսաւ որ Հայր Դաւիթի նշանակումով ծովի պատմութեան մէջ նոր էջ մը կը բացուի: Ան վստահեցուց նաեւ Օլսական Խորհրդի եւ հաւատացեալներու յանձնառութեան մասին: Իր կառքին Հայր Դաւիթը շնորհակալութիւն յայտնեց բոլորին եւ եկեղեցիին ու համայնքին ծառայելու համար խոստացաւ ընել հնարաւորը:

ԵՐԳԵՐՈՒԷ, ԱՂՕԹՔՆԵՐՈՒԷ, ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒԷ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԳԵԱՆ ՕՐՀՆԵՐԳԵՐՈՒԷ ԵՐԵԿՈՅ

Լուս Գիշեր, Սուրբ Գիշեր



Il est ne, le divin Enfant

Ֆրանսիայի Հայկական Արքեպիսկոպոսարանի երիտասարդները, ուրախ եւ հրաւիրելու Փարիզի մեր հաւատացեալները, միանալու իրենց ու իրենց ընկերներուն եւ ընտանիքի անդամներուն. երգերու, աղօթքներու, սաղմոսներու եւ սուրբ ծննդեան օրհներգերու երեկոյեան մը համար, որ տեղի պիտի ունենայ Փարիզի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ Մայր Տաճարին մէջ: Երեկոն պիտի պարունակէ ֆրանսերէնով եւ հայերէնով Սուրբ Ծննդեան սիրուած երգեր, որոնք Յիսուսի, մեր Փրկչի ծննդեան մասին Աստուածաշունչի ընթերցումներով միախառնուած պիտի ըլլան: Ֆրանսայի թեմին մէջ առաջին անգամ Հայկական Արքեպիսկոպոսարանը պիտի բանայ իր դռները, որպէսզի մեր հաւատացեալները այս մեծ տօնին պատիւին, գան եւ միանան երգերուն: "Սոփրանո" կամ "Թէնոր" ըլլալու պէտք չկայ: Եկէ՛ք եւ բերէ՛ք ձեր ընտանիքը եւ ընկերները ձեզի հետ: Տիրոջ ծնունդը ուրախութեամբ տօնելու համար միացէ՛ք մեզի: Թուական՝ 13 յունուար, 2018 / Ժամ՝ 18:00-20:00 / Տեղ՝ Սուրբ Յովհաննէս Մկրտիչ Մայր Տաճար / Գինիով ընդունելութիւն / Սուտքը ազատ է:

ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐՈՒԷ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎՐ



Շաբաթ, դեկտեմբերի 2-ին, Ֆրանսայի Թեմի տարբեր ծովերը ներկայացնող պատուիրակներ, Գրենոպլի հայկական եկեղեցիի սրահին մէջ, հաւաքուեցան թեմի հոգևորականներուն հետ. Առաջնորդ, Գերաշնորհ Ս. Վահան Եպիսկոպոս Յովհաննէսեանի նախագահութեամբ, իրենց ամենամեայ ժողովը գումարելու համար: Ժողովի նախագահ Պարոն Արա Տէլիբաբեանը ողջոյնի խօսքերով նիստը բացաւ: Ան հաստատեց ժողովը գումարելու համար օրինական մեծամասնութեան ներկայութիւնը եւ յայտարարեց ժողովի բացումը ու Սրբազանը աղօթելու եւ իր օրհնութիւնը տալու հրաւիրեց: Այնուհետեւ Պարոն Տէլիբաբեանը խօսք տուաւ Գերաշնորհ Ս. Վահան Եպիսկոպոս Յովհաննէսեանին, որպէսզի ան գնահատէ եւ մեկնաբանէ թեմի 2016 տարուայ գործունէութիւնը: Թեմական Խորհուրդի նախագահ Փարիս Ճոլիեանն ալ Թեմական Խորհուրդի ատենագրութիւններուն հաշուետւութիւնը ըրաւ: Երրորդ եւ վերջին զեկուցողը եղաւ Թեմական Խորհուրդի գանձապետը: Թեմի ընթացիկ ծախսերուն, ծովերու չմասնակցիլը եւ գանձատրման (financement) բացակայութիւնը երկար վիճաբանութիւններու պատճառ եղաւ: Յետոք, դեռ ծովեր կան, որոնք թեմի անդամներ են, բայց չեն վճարել իրենց տարեկան բաժնեգինը (cotisation): Վահան Սրբազան վերջաւորութեան, Գրենոպլի քահանային եւ Օլսական Խորհուրդին, շնորհակալութիւն յայտնեց իրենց հիւրընկալութեան. ինչպէս նաեւ հոգևորականներուն եւ պատուիրակներուն, ժողովին իրենց մասնակցութեան համար: Մեր եկեղեցին եւ մեր ժողովուրդը ամրապնդելու համար, ան բոլորէն խնդրեց թէ որպէս մէկ ընտանիք, միասնաբար, ներդաշնակութեամբ ու համբերութեամբ աշխատին: Ժողովը աւարտեցաւ Գերաշնորհ Վահան Սրբազանի աղօթքով:

ԹԵՄԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑ

Առաջնորդի գրասենեակը ուրախ է ծանուցելու 2018-ի թեմական օրացոյցի հրատարակութիւնը: Այս տարի օրացոյցի թեման՝ հայկական ձեռագիրները եւ մանրանկարչութիւնն են: Ամսուայ մը նուիրուած իւրաքանչիւր էջ, հին հայկական մանրանկարով մը զարդարուած է, եւ այդ ամսուայ հիմնական տօնը կը ներկայացնէ: Տարուայ իւրաքանչիւր ամիսը տպագրուած է A3 չափի էջի մը վրայ եւ կ'ընդգրկէ տուեալ ամսուայ հիմնական տօնի բացատրութիւնը: Դեկտեմբեր ամիսէն վերջ օրացոյցին մէջ, տարուայ տօնակատարութիւններու եւ ծումապահութեան օրերու մասին, օր-օր պատրաստուած հայերէն եւ ֆրանսերէն մանրամասն ցուցակ մը կայ: Անոր կը յաջորդէ, Ֆրանսայի թեմի բոլոր եկեղեցիներու, ինչպէս նաեւ Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակութեան կցուած եկեղեցիներու ցանկը: Օրացոյցի վերջը, մկրտութեան, հարսանիքի եւ թաղման կազմակերպման, ինչպէս նաեւ տնօրինի մասին գործնական տեղեկութիւններ կարելի է գտնել: Այս օրացոյցը Փարիզի թեմի գրասենեակէն 10 € արժեքով կարելի է ձեռք բերել. իսկ թղթատարութեան միջոցով տուն ուղարկուած օրացոյցին արժեքը 18 € է.Է:

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳԻ ԽԹՄԱՆ ԸՆԹՐԻՔ՝ 5 ՅՈՒՆՈՒԱՐ 2018



Փարիզի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ Մայր եկեղեցոյ Տիկնանց Յանձնախումբի կողմէ Ուրբաթ 5 Յունուար 2018, ժամը 19.30-ին Նուրիան Ֆրէնկեան սրահին մէջ, Առաջնորդ, Գերաշնորհ Ս. Վահան Եպիսկոպոս Յովհաննէսեանի ներկայութեամբ, Ծնունդի Խթման ընթրիք մը կը կազմակերպուի (15 Rue Jean Goujon - 75008 Paris):
Այս ընթրիքը կ'ընդգրկէ գինիով եւ խմիչքներով ճոխ ճաշացանկ մը, ինչպէս նաեւ նուագախումբ մը երաժշտութեան եւ պարի համար: Ծախսերու մասնակցութիւն՝ 50 € :
Տեղերը ապահովելու համար հեռաձայնել՝ 06 15 02 76 84 եւ 06 83 81 70 70 թիւերուն:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ...

- Մեր հաւատացեալներուն կը տեղեկացնէք, որ այս չորեքշաբթի դեկտեմբեր 28-ին եւ յաջորդ չորեքշաբթի օր "Էջ առ էջ, մեր Պատարագը ուսումնասիրենք" թեմայով Աստուածաշունչի ուսումնասիրութիւն տեղի պիտի չունենայ: Յաջորդ նիստը տեղի կ'ունենայ չորեքշաբթի 17 Յունուար 2018, ժամը 20:00-ին, Հայ Առաքելական Սուրբ Յովհաննէս Մկրտիչ Մայր Տաճարի Նուրիան Ֆրէնկեան սրահին մէջ: Ընդհանուր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ:
- ԱՃՈՒՐՈՒՎ ՎԱՃԱՌՔ - Փարիզի հայկական եկեղեցին, Փարիզի Ծովի օգտին համար, Կիրակի, 18 Մարտ 2018-ին, ժամը 16:30-ին երկրորդ աճուրդով վաճառք մը կը կազմակերպէ: Եթէ առարկաներ ունիք, լրացուցիչ տեղեկութիւններու համար մի վարանիք դիմելու վաճառքի պատասխանատու Շուշան Տուրեանին: Հեռաձայն 06.48.93.70.16, էլ-գիր chouchdourian@hotmail.com.
- Ժամանակացոյց Սուրբ Ծնունդ: Ուրբաթ 5 Յունուար 2018՝ ճրագայոյց Երեկոյեան ժամերգութիւն ժամը 08:00ին եւ Ս. Պատարագ՝ ժամը 17:30: Շաբաթ Սուրբ Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն ժամերգութիւն ժամը 8:00ին Ս. Պատարագ եւ Զրօրհնէք ժամը 10:30ին: Կը Պատարագէ Առաժնորդ Սրբացան Գերաշնորհ Ս. Վահան Եպիսկոպոս Յովհաննէսեան.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՏՐԱՆՍՅԻ
Գերաշնորհ
Տ. Վահան Եպս Յովհաննէսեան, Առաջնորդ
Հայրապետական Պատուիրակ
Արեւմտեան Եւրոպայի



DIOCÈSE DE FRANCE DE L'ÉGLISE
APOSTOLIQUE ARMÉNIENNE

Son Excellence
Monseigneur Vahan HOVHANESSIAN
Primat de France, et Légat pontifical à
l'Europe de l'Ouest

No. 24, Tome 4

E-BULLETIN

le 22 décembre 2017